

Ըստուր Երևանցի

ՈՒՐԱԽ
ՆԿԱՐԻՉ



ԹԵ ԻՆՉՈՒ...

Հերիաթմեր անտառի մասին

կարդա
և
գունավորիր



4



Ճուղուր Երևանցի

ԹԵ ԻՆՉՈՒ...

Հեքիաթներ անտառի մասին



ԵՐԻՅ ՊՐԻՏ
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԱՆՏԱՌՈՒՄ ՏԵՐԵՎԱՇԱՓ ԼԻՆՈՒՄ

Անտառը շատ է գեղեցկանում աշնանը, երբ ծառերի տերևները գույնզգույն են դառնում: Այդ ընթացքում դպրոցականները հաճույքով անտառ են գնում, հավաքում են գունավոր տերևներ, դրանք չորացնում իրենց գրքերի էջերի



արանքում: Իսկ մանկապարտեղ հաճախող փոքրահասակ մանուկներն էլ սիրում են խաղալ ծառերից գետնին թափված աշնանային տերևների հետ:

Դուք էլ, սիրելի երեխաներ, հաստատ զվաճացել եք, երբ գետնին թափված աշնանային տերևները հավաքելով՝ խորձ եք սարքել, վերև նետել և ձեր իսկ սարքած գույնզգույն տերևաթափի տակ կանգնել: Պատկերացնում եմ, թե որքան եք ուրախացել դրանից և երևի թե հաճախ եք հարցրել մեծերին, թե ինչո՞ւ է տերևաթափ լինում՝ նրանցից ստանալով տարրեր պատասխաններ: Դե իհարկե, երբ դպրոց գնաք և լավ սովորեք, ձեր դասագրքերից կիմանաք ամենաձիշտ պատասխանը, իսկ հիմա ինձ լսեք, թե ես ինչ կպատմեմ:

Աստաղի զարդը միշտ էլ տերևներն են եղել: Նրանք գեղեցկացնում են ծառերին՝ հագցնելով կանաչ շորեր: Բայց ծառերը միշտ չեն, որ դրանից իրենց լավ են զգում՝ նամանավանդ, երբ անտառում ուժեղ քամի է քարձրանում: Բան այն է, որ քամին և ծառի տերևները մինչև այսօր էլ ընկերներ են և երբ հանդիպում են, սիրում են չարաձճի խաղեր խաղալ: Իսկ այդ խաղերը բնավ դուր չեն գալիս ծառերին, քանի որ երբ քամին ուժգնորեն փչում է տերևների վրա՝ փորձելով դրանք պոկել և օդում խաղ անել, դրանից ձյուղերը ձկվում են, ձոճվում և ցավ են պատճառում ծառերին: Երբեմն քամին շատ է ուժգնանում, անգամ տերևների հետ իր չարաձճի խաղերի պատճառով ձյուղեր է ջարդում, իսկ փոթորիկների ժամանակ՝ անտառում ծառեր արմատախիլ անում:

Դե, ամռանը քամիները մեղմ են փչում, և դրանց խաղերը տերևների հետ ինչ-որ տեղ տանելի են ծառերի համար: Բայց հենց խոր աշնանը անտառում միշտ էլ քամիները սաստկանում են, որը չափազանց անհանգստացնում է ծառերին: Եվ, ահա, մի օր անտաղի ամենատաքրեց ու հաստարուն ծառը դիմեց իր տերևներին:



– Իմ շատ սիրելի տերներ, տասնյակ տարիներ ես հպարտացել եմ ձեզնով, քանի որ ձեր կանաչ գույնը և փարթամությունը ինձ շատ գեղեցիկ տեսք են տվել: Ձեր շնորհիվ բոլորը հիացել են իմ կանաչ գեղեցկությամբ, արևից պաշտպանվել են իմ փարթամ ճյուղերի ստվերում, անձրսից չեն թրջվել՝ թաքնվելով սաղարթախիտ տերներիս տակ: Մենք միշտ միասին ենք եղել, և ես երբեք չեմ նախանձել, երբ դուք ընկերացել ես քամու հետ: Բայց հիմա արդեն շատ եմ ծերացել և չեմ ուզում, որ քամու հետ ընկերություն անեք:


– Իսկ ինչո՞ւ, – զարմանքով պատասխանում էին տերները, – ինչ կապ ունի քո ծերությունը մեր ընկերության հետ: Տարիներ շարունակ մենք քո հագուստն ենք եղել, չենք թողել, որ մրսես ցուրտ եղանակներին, ու միշտ գեղեցկացրել ենք քո ճյուղերը: Բայց միաժամանակ նաև ընկերություն ենք արել քամու հետ, և դու երբեք չես առարկել:

– Դուք ճիշտ եք, իմ սիրելի տերներ, – պատասխանեց ծառը: Ես չեմ առարկել, քանի որ ջահել էի, ուժեղ և կարողանում էի երիտասարդ տարիներին իմ ճյուղերով դիմադրել քամուն:

Իսկ հիմա տկարացել եմ և
այլս չեմ ցանկանում, որ դուք
քամու հետ խաղ անեք: Այսու,
ինձ էլ ճիշտ հասկացեք, երբ
ճյուղերս քամուց ձոճվում են,
դա ինձ ցավ է պատճառում...

– Բայց մենք չենք ուզում
մեր ընկերությունը խօսել քա-
մու հետ, – առարկեցին տերն-
երը:

– Ինչ արած: Այդ դեպքում երեսի ես ձեզ հետ այլս ընկերություն չանեմ, – տխուր պատասխանեց ծառը: – Դուք կարող եք իսձնից ընդմիշտ հեռանալ, երբ աշնան քամին անտառ կգա:



Տերևները հանկարծակի եկան: Նրանք անշարժ լսում էին մայր ծառին և ոչ մի պատասխան չէին գտնում: Եվ լավ էր, որ այդ զրույցը լսել էր իմաստուն բուն, որն ապրում էր ծառի փշակում:

– Ես լսեցի ձեր զրույցը, – հանկարծ սկսեց խոսել բուն: – Ըսկերությունը շատ թանկ բան է և երբեք չի կարելի այն խօսել: Այ, օրինակ, ես շատ կցանկանայի, որ տերևները ընկերություն անեին ինչպես մայր ծառի, այսպես էլ քամու հետ:

– Բայց ինչպես, – զարմանքով արձագանքեցին տերևները: – Չի՞ որ իհմա քամին կգա, մենք նորից կսկսենք նրա հետ խաղալ, իսկ ծառին դա դուր չի գա, և այդ խաղը նա կարգելի:

– Ես ելքը գտա, – պատասխանեց իմաստուն բուն: – Խոր աշնանը, երբ քամիները ուժեղանում են, դուր պոկվեք ձյուղերից, որպեսզի շատ ցավ չպատճառեք նրանց: Միևնույն է, ձմռանը անտառ քիչ են այցելուներ գալիս: Մերկ ծառը մի կերպ, առանց



հագուստի էլ կապրի: Իսկ երբ կզա գարունը, դուք նորից կհայտնվեք ձյուղերին և ծառին ավելի թարմ տեսք կհաղորդեք:

Իմաստուն բուի առաջարկը դուք եկավ, թե՛ ծառին, և թե՛ տերևներին: Եվ դրանից հետո, ամեն տարվա աշնան վերջին ծառերը սկսեցին տերևաթափ լինել, պայմանով, որ գարնանը նորից դիմավորեն իրենց վաղեմի բարեկամ տերևներին: Իսկ ձյուղերից պոկված տերևները շատ գոհ էին, քանի որ աշնան քամուն դիմավորում էին գետնին և ազատորեն շուրջպար բռնում նրա հետ:



ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՏԵՐԵՎՆԵՐՆ ԱՇԽԱԾ ԳՈՒՆԱՎՈՐՎՈՒՄ

Միրենի փոքրիկներ: Դուք նախորդ հեքիաթից իմացաք, թե ինչու է տերևաթափ լինում: Իսկ գիտե՞ք արդյոք, թե ինչու են աշնանը տերևները գույնզգույն դառնում: Դե, եթե չգիտեք, ուրեմն լսեք իմ պատմությունը:

Երբ աշնանը տերևները որոշեցին լքել ծառի ճյուղերին և իջնել գետնին, դրանից անտառային խոտերը շատ զայրացան: Այս նրանք, աճելով հողի վրա, համարում էին, որ իրենք կանաչ տերևներից ոչ պակաս գեղեցկություն էին տալիս անտառին: Ու երբ գետնին թափվող տերևները սփռվում էին անտառի կանաչ խոտածածկին, ոչ միայն կոծկում էին վերջինիս գեղեցկությունը, այլև չարձիրեն շուրջպար բռնելով աշնանային քամու հետ՝ խանգարում էին անտառային խոտերի անդորրը:

Դե, իհարկե, այս իրավիճակը գետնին աճող խոտերը շատ չէին հանդուրժելու, այդ պատճառով էլ մի օր իրենց բողոքը ներկայացրին մայր ծառին:

– Մեր սիրելի բազմադարյան ծառ, ինչու՞ ես թույլ տալիս, որ ճյուղերիդ տերևները աշնանը լքեն քեզ: Մի՞թե չես տեսնում, որ դրանք, իջնելով գետնին, մեզ համար կարծես անկոչ հյուրեր լինեն: Բավական չէ, որ ինչպես կամենան, փովում են մեզ վրա ու նեղություն տալիս, դեռ մի բան էլ չարաձի խաղեր են անում քամու հետ: Խնդրում ենք քեզ, մի՞ թույլ տուր, որ տերևաթափ լինի:



– Ես չեմ կարող աշնանը տերևաթափ չլինել, – պատասխանեց մայր ծառը: – Եվ նոյնիսկ հորդորել եմ անտառի մյուս ծառերին էլ՝ հետևել իմ քայլին: Մենք ծառերով որոշել ենք ձմեռը դիմավորել առանց տերևների: Այդպես, ձմռան դուրս ամիսներին, ավելի հանգիստ ենք ապրում:

– Բայց առանց տերևների դուք մերկանում եք, և, կորցնելով ձեր կանաչ հագուստը, անգամ անշուր տեսք եք ստանում, – չարախոսեցին անտառային խոտերը: Լավ չէ՞ր լինի, որ գոնե մեր կանաչ խոտածածկով լրացնեինք ձեր գեղեցկությունը: Եթե տերևները ձեզ լրում են, ապա թող այլևս գարնանը չվերադառնան: Այ, կտեսնեք, որ միայն կանաչ խոտն էլ բավական է, որ դուք գեղեցկանաք...



Գետնին աձող խոտերն ու թփերը հույս ունեին, որ ծառերը կլսեն իրենց հորդորները, կգժտվեն չարաձճի տերևների հետ և ընդմիշտ կհեռանան միմյանցից: Այ, այդ ժամանակ էլ կանաչ խոտերը առիթից կօգտվեն և կդառնան անտառի գեղեցկուիհները: Եվ, ով գիտե, միգուցե մի օր հրավերք ստանան ծառերից՝ վեր բարձրանալու և ապրելու դրանց ձյուղերի վրա:


– Իսկապես, ինչո՞վ ենք պակաս տերևներից: Նույն կանաչ գույնն ունենք, նույն անտառային թարմությունը և կարող ենք շատ հանգիստ փոխարինել ծառի տերևներին, – անընդհատ փսխում էին ծառերի փեշերին աձող խոտերը: – Մնում է համոզենք ծառերին, որ նրանք հավերժ հրաժարվեն իրենց տերևներից և մեզ հրավիրեն վերև: Բավակա՞ն է, որքան ապրեցինք անտառային այս խոնավ հողի վրա: Ժամանակն է, որ վերջապես վոնդենք չարաձճի տերևներին անտառից և ծառերի վրա փոխարինենք իրենց:

Դե, իհարկե, այդ փսխոցները լսում էին ոչ միայն ծառերի ձյուղերը, այլև նրանց բարեկամ կանաչ տերևները: Նրանք ոչ միայն զարմանում, այլև զայրանում էին խոտերի այդ հանդգնության վրա:

– Ինչպես են համարձակվում այդ անամոթները չարախոսել մեր մասին և ծառերին համոզել, որ մեզ վոնդեն անտառից, – միմյանց բողոքում էին կանաչ տերևները: – Մի տես, թե ինչ անամոթն են: Նույնիսկ ցանկանում են վեր բարձրանալ և մեր տեղը գրավել: Ո՞վ է տեսել, որ ծառերի վրա տերևների փոխարեն խոտ աձի...

Սակայն, միևնույն է, խոտերը մինչև այսօր էլ չեն դադարեցնում իրենց փսխոցները, որից շատ են զայրանում կանաչ տերևները: Վերջիններս իհարկե չեն պատասխանում այդ փսխոցներին, սակայն զայրույթից սկսում են կարմրել, դեղնել ու փոխել իրենց կանաչ գույնը:





Ահա թե ինչու խոր աշնանը, երբ ամեն անգամ մոտենում է տերևաթափը, անտառի խոտածածկը նորից սկսում է չարախոսել տերևներից՝ նրանց համարելով գետնին թափվող անկոչ հյուրեր: Իսկ տերևները այդ լսելով, սկսում են զայրանալ, շիկնելու դրանից գույնզգույն դառնալ: Սակայն դա բնավ չի խանգարում նրանց ազատ զգալ և գետնին խաղ բռնել աշնան քամու հետ:

Դե, իհարկե, քամու հետ այդ պարը ժամանակ առ ժամանակ նյարդայնացնում է խոտածածկին, սակայն հաճույք է պատճառում ծառի ձյուղերին, որոնք վերևից կարոտով հետևում են չարածձի տերևների շուրջպարին: Չէ որ ամբողջ ձմեռ գույնզգույն տերևները ծածկվելու են սպիտակ ձյան շերտով և միայն գարնանն են թարմացած վերադառնալու ու զարդարելու ծառերի ձյուղերը:




ԹԵ ԻՆՉՈՒ Է ԵՂԵՎՆԻՆ ՄՇՏԱԿԱՆԱԶ

Միրելի՞ փոքրիկներ, դուք բոլորդ էլ գիտեք, որ ձմեռնամուտին անտառում տերևաթափ է լինում, ծառերը մերկանում են և իրենց ճյուղերին հյուրընկալում ձյան փաթիլներին: Իսկ գիտեք արդյոք, թե ինչո՞ւ է անտառում միայն եղևնին մշտականաչ մնում տարվա բոլոր եղանակներին՝ անգամ ձմռանը: Եթե չգիտեք, իիմա ես ձեզ այդ մասին կպատմեմ:

Եղևնին, համեմատած անտառում աճող հաստարուն ծառերի հետ, բարակ ճյուղերով է աճում ու միշտ էլ խուսափում է տերևաթափից: Այս նա շատ լավ է հասկանում, որ առանց տերևների կորցնելու է իր շքեղ տեսքը և նմանվելու է մի իին ու օգտագործված ցախավելի: Եվ այդ է պատճառը, որ մշտադալար այդ ծառը երբեք չի հրաժարվում իր կանաչ և փշոտ տերևներից: Բայց կա նաև մեկ այլ պատճառ, որ ստիպում է եղևնուն տերևաթափ չլինել:

Բանն այն է, որ եղևնին շատ ինքնահավան և մեծամիտ է: Նա նման է ինքնահավան մի օրիորդի, որ մեծամտա-



նում է իր գեղեցկությամբ: Գիտեր, որ իր տեսքը շատ շքեղ է, և ուզում է միշտ այդպես գեղեցիկ մնալ: Հատկապես, նա իրեն առավել լավ է զգում ձմռանը, երբ միակ կանաչ ծառն է իր շրջապատում և խսկույն աչքի է ընկնում:

Իսկ ձմռանը մարդիկ անտառ են այցելում որս անելու համար և, նկատելով եղևնուն, խոսում են միմյանց հետ:

– Տես, է՛, ինչ համառն է, – ասում էր նրանցից մեկը: – Բոլոր ծառերը տերևաթափ են եղել, իսկ սա, նույնիսկ այս խոր ձմռանը, չի հրաժարվում իր տերևներից:

– Միգուցե համառ է, բայց շատ գեղեցիկ է, պատասխանում էր մյուսը: – Տեսեք, թե ինչ գեղեցիկ կառուցվածք ունի և ինչ թարմ տեսք: Եթե մյուս ծառերը կարծես քսած լինեն՝ իրենց մերկ ճյուղերով, ապա եղևնին միշտ արթուն է և բոլորին հիացնում է իր գեղեցիկ կանաչ տեսքով:



Լսելով այդ խոսակցությունները, եղևնին շատ էր ուրախանում, որ ձմռանը պահպանում է իր փշոտ տերևները ու միշտ կանաչ է մնում: Նա շատ լավ էր հասկանում, որ իր կանաչ հագուստով միանգամից աչքի է ընկնում ձյունածածկ անտառում, սակայն դրանով չէր բավարարվում: Եղևնին շատ էր երազում պճնամոլ օրիորդի նման փոխել իր հագուստը, ավելի ձոխ հագնվել և առավել գեղեցիկ երևալ բոլորի աչքին:

Ու մի օր Էլ կատարվեց եղևնու երազանքը: Ամանորի նախօրեին մարդիկ նորից անտառ էին եկել որս անելու, երբ հանկարծ նրանցից մեկը նկատեց եղևնուն և ասաց:

– Ինչ եք կարծում, չտանե՞նք այս կանաչ ծառը մեր տուն: Տեսեք, թե ինչ գեղեցկուիի է:

– Իհարկե, արժի եղևնուն տուն տանել, նա այնքան թարմ տեսք ունի, իսկ տերևներն Էլ անուշահոտ բուրում են: Մեր բնակարանները Ամանորին կլցվեն թարմ տերևների բույրով: Դա շատ կուրախացնի հյուրերին, – կարծիք հայտնեց մյուս որսորդը:

– Իսկ պատկերացնո՞ւմ եք, թե ինչ գեղեցիկ տեսք կունենա եղևնին, եթե մեր երեխաները նրան զարդարեն գույնզգույն խաղալիքներով, – միջամտեց այդ խոսակցությանը մեկ այլ որսորդ:

Եղևնին ուշադիր լսում էր որսորդներին և իր հասցեին հնչած գովասանքից ավելի էր մեծամտանում ու հպարտանում: Ու այդ օրը այնքան մեծամտացավ, որ նույնիսկ ցավ Էլ չզգաց, երբ մարդիկ իրեն կտրեցին ու անտառից տուն տարան, որպեսզի տոնածառ դարձնեն:

Ի վերջո, տեսնելով, որ կարող են Ամանորին առավել գեղեցիկ տեսք ձեռք բերել ու գույնզգույն խաղալիքներով զարդարվել, եղևնիները մինչև այսօր Էլ տերևաթափ չեն լինում և իրենց կանաչ հագուստով անտառում սպասում են մարդկանց: Նրանք շատ լավ գիտեն, որ բնակարաններում ավելի են գեղեցկանալու և դառնալու Նոր տարվա կանաչ զարդը՝ գունավոր լույսերով,

փայփլուն խաղալիքներով, ծառի տակ երեխաների համար դրված նվերներով:

Ահա թե ինչու եղևնիները երբեք չեն հրաժարվում իրենց փշոտ տերևներից, քանի որ գիտեն՝ առանց իրենց կանաչ հազուստի երբեք տոնածառ չեն դառնա:



ԹԵ ԻՆՉՈՒ Է ՍՈԽԱԿԸ ԳԻՇԵՐՆԵՐԸ ԵՐԳՈՒՄ

Երեխաները չեն սիրում գիշերով անտառ այցելել: Պատճառը մեկն է: Երբ մութն ընկնում է, կանաչ ծառերը կարծես սև շորեր են հագնում, և անտառը մի տեսակ անհրապույր է դառնում և մի քիչ էլ՝ վախազդու: Նույնիսկ եթե անամապ գիշեր է լինում, և լուսինը լուսավորում է մեր շրջապատը, միևնույն է, սաղարթախիտ ծառերի ձյուղերը թռոյլ չեն տալիս, որ այդ լուսը մտնի մութ անտառ:

Եվ դա է պատճառը, որ անտառային թռչունները գիշերները քուն են մտնում, բացի քուից, որը գիշերներն է որս անում: Այդ թռչունը մկներով, միջատներով և նույնիսկ փոքրիկ ձվիկներով է սնվում և հետո էլ կուշտ-կուշտ՝ ցերեկները խոր քուն է մտնում: Բայց անտառում բացի բվից, մեկ այլ թռչուն էլ է գիշերները ժամանակ առ ժամանակ արթուն մնում, և, պատկերացնում ենք, ոչ թե որս է անում, այլ գեղեցիկ երգում է: Խոսքը փոքրիկ սոխակի մասին է, որը անտառում հայտնի է իր երգեցիկ ձայնով, և անգամ գիշերներն է երգում՝ չխնայելով իրեն: Իսկ թե ինչո՞ւ է գիշերը երգում, ես այդ մասին ձեզ հիմա կպատմեմ:

Ո՞վ չգիտի, որ թռչունները քույն են հյուսում ծառերի ձյուղերի վրա և այնտեղ էլ ձու են ածում, հետո էլ՝ ձագուկներ ունենում: Սակայն սոխակը չի սիրում ձվադրել ծառերի վրա: Այդ թռչունը մինչև այսօր էլ իր քույնը հյուսում է գետնին՝ չոր խոտերով ու

տերևներով, և հենց այդտեղ էլ ձագուկներ է ունենում: Ու այդ մասին, իհարկե, քաջատեղյակ է նաև գիշերային որսորդ բուն:

Դե, ինքներդ եք հասկանում, թե ինչ վտանգավոր է անտառում գետնին, չոր խոտերի մեջ թաքցնել թռչնի ձվերը: Այս այդ խորամանկ բվերն իրենց սուր աչքերով գիշերները շատ հեշտ



Են գտնում սոխակի ձվերը և դրանք կոտրելով՝ մի լավ ընթրիք անում:

Դրանից մայր սոխակը շատ էր զայրանում և անընդհատ դիմում էր հայր սոխակին:

– Դե, մի բան մտածի՞ր, մի ձա՛ր արա, որ մեր ձագուկներին պաշտպանենք այս ագահ բվերից:

– Բայց ես ի՞նչ կարող եմ անել, – սրտնեղած պատասխանում էր հայր սոխակը: Դու ինքդ լավ գիտես, որ բուն գիշերային մթության մեջ շատ լավ է տեսնում, և որքան էլ գետնին փոված չոր խոտերի մեջ թաքցնում ենք մեր ձագուկների ձվերը, միևնույն է, բուն դրանք հեշտությամբ գտնում և ուտում է: Ինքդ համեմատի՞ր, թե քանի անգամ է բուն իր չափերով գերազանցում ինձ: Նա շատ ուժեղ է, և ես չեմ կարող այդ խոշոր թռչնին հաղթել:

– Չէ, այստեղ ուժը կարևոր չէ, – պատասխանեց մայր սոխակը:


– Մենք պետք է բվին ոչ թե ուժով, այլ խորամանկությամբ հաղթենք:

– Բայց ինչպես, – զարմացած հարցրեց հայր սոխակը:

– Շատ պարզ: Դու ընդամենը գիշերները չես քնելու և գեղեցիկ երգելու ես, եթե դրա կարիքը զգացվի:

– Իմ ձագուկներին փրկելու համար ես պատրաստ եմ ամեն ինչի, նույնիսկ գիշերները երգելուն, բայց անհարմար չի լինի, չէ որ այդ





Ժամանակ անտառի բնակիչները քնած են:

– Ոչ բոլորը, – շարունակեց մայր սոխակը: Այ, օրինակ, բուն արթուն է, և գիշերը որսի է դուրս գալիս: Նա շատ լավ գիտի, որ սոխակները ապրում և երգում են իրենց բներին մոտ: Եթե մենք ցերեկները երգում ենք և անտառի բնակիչներին հաճույք պատճառում, ապա դրանից վնաս չկա, քանի որ նրանք չեն Էլ փորձում մոտենալ մեր բնին և վնասել ձագուկներին:

– Հետո՞ ինչ, – զարմացած հարցրեց հայր սոխակը:

– Հետո այն, որ երբ բուն գիշերը լսի քո երգը, կկարծի, թե դու մեր ձագուկների համար ես երգում ու կմոտենա քեզ՝ մեր ձվերը գտնելու համար: Իսկ դու կխորամանկես, կերգես մեր բնից շատ հեռու և դրանով մոլորության մեջ կգցես գիշերային որսորդին: Ամեն անգամ բուն կմոտենա քո ձայնին, կսկսի որոնել սոխակի բույնը ու այդպես Էլ չի գտնի:

Ու մինչև այսօր Էլ, եթե դուք գիշերները անտառում սոխակի երգ լսեք, հաստատ իմացեք, որ հայր սոխակը դրանով խորամանկում է և անկուշտ բվին գեղեցիկ դայլայլով հեռացնում իրենց բնից՝ դրանով փրկելով իր ձագուկներին:

ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ՍԿՅՈՒՇԵՐՆ ԸՊՐՈՒՄ ՓԶԱԿՈՒՄ

Եթե դուք անտառ այցելեք, կտեսնեք, որ սկյուռները ապրում են ծառերի վրա և, մարդկանց տեսնելով, արագ իջնում են ներքը՝ հույս ունենալով, որ իրենց կկերակրեն: Այդ շատակերներն այնքան էլ մեծ չափեր չունեն, դրա համար էլ մանուկները



դրանց հաճախ սկյուրիկ են անվանում: Իսկ գիտե՞ք արդյոք, որ ժամանակին սկյուռները չեն բնակվել ծառերի փշակներում, այլ հարևանություն են արել գետնափոսերում ապրող մկների հետ: Այսր նրանք էլ, ինչպես մկները, կրծողներ են և սնվում են արմատներով, միջատներով, հատապտուղներով: Միայն թե, ի տարբերություն մկների, սկյուռները շատ գեղեցիկ պոչ ունեն և շատ են հպարտանում դրանով:

Եվ ահա, մկների պես, սկյուռներն իրենց գետնափոսերում ձմռան պաշար էին հավաքում՝ կուտակելով չոր սնկեր,

հատապտուղներ, արմատներ: Սակայն սկյուռները, լինելով չափազանց մոռացկոտ գազանիկներ, ձմռան ցուրտ օրերին հաճախ էին շփոթում իրենց գետնափոսերը և, անկոչ հյուրի պես, ժամանակ առ ժամանակ մտնում էին մկների բներն և անամոթաբար օգտվում նրանց կուտակած սննդի պաշարներից: Դե, իհարկե, սա երկար տևել չէր կարող, և այդ պատճառով էլ մկները հաճախ էին այս առիթով բողոքում:



– Սա ի՞նչ խայտառակություն է: Հետո՞ ինչ, որ սկյուռները մեզանից գեղեցիկ են, ին դա նրանց իրավունք չի տալիս մտնել մեր բները և օգտվել այստեղ պաշարված ուտելիքից, – ամենուր բողոքում էին մկները:

Լսելով այդ, սկյուռներն արդարանում էին.

– Այսր մեզ էլ ձիշտ հասկացեք, – բոլորն էլ գիտեն, որ մենք մոռացկոտ ու ցրված գազանիկներ ենք: Հո դիտավորյալ չե՞նք մտնում մկների ձմեռային ամբարները: Մենք էլ ենք ձմեռվա ուտելիք ամբարում ու երբեմն շփոթում ենք և օգտվում հարևանների ամբարած ուտելիքից:

– Բա ինչպես է լինում, որ մենք չենք շփոթում և երբեք չենք օգտվում ձեր ամբարներից, – զայրացած պատասխանում էին մկները: – Ուղղակի մենք համոզված ենք, որ դուք շատակեր սկյուռներ եք և ամբողջությամբ ուտում եք ձեր սննդի պաշարները՝ դեռ ձմեռը չափարտված: Եվ քանի որ, երբ ձեր ամբարները դատարկվում են, և սնվելու ոչինչ չեք ունենում, ձևացնում եք, թե իբր շփոթել ու մեր բներն եք մտել: Մենք այլսա չենք ուզում ձեզ հետ հարևանություն անել և պահանջում ենք, որ հեռանաք մեզնից:

– Բայց ու՞ր հեռանանք և ինչպես ապրենք, – ամոթխած պատասխանում էին սկյուռները:

– Դուք կարող եք ծառերի վրա ապրել և ամբարել ձմեռվա պաշարները փչակներում ու մեզ չխանգարել, – պնդում էին մկները: – Այդպես ավելի լավ կլինի, այլս չեք շփոթի ծառերի փչակում ձմեռվա համար ձեր ամբարած պաշարները մեր գետնափոր սննդի հետ:

– Բայց մենք ինչպես ենք ապրելու ծառերի ճյուղերի վրա: Այսր դրանք շատ բարձր են, բա որ ընկնենք ու մեզ վնասենք, – առարկում էին սկյուռները:

– Այդ մասին մի անհանգստացեք, – սկյուռներին համոզում էին մկները: – Մի տեսեք, թե ինչ գեղեցիկ ու փամփլիկ պոչ ունեք: Եթե օրերից մի օր դուք պատահաքար սայթակեք և ընկնեք այդ բարձրությունից, ձեր պոչը կդառնա պարաշյուտ և կօգնի, որ անվնաս և հանգիստ վայրէջք կատարեք:

– Լավ եք համոզում, – շարունակում էին առարկել սկյուռները, – բա ծառերի վրա որտե՞ղ ենք բնակվելու: Եթե ներքևում գետնափոսեր էինք սարքում, ապա ծառերի վրա ի՞նչ պիտի անենք:



– Ոչինչ անել պետք չէ, ծույլ սկյուռներ: Բարձրացե՛ք ծառերի վրա, այնտեղ փշակներ գտե՛ք, և ձեզ համար բույն սարքեք: Դուք այլս մեզ հետ գետնափոսերում չեք ապրելու:

Տեսնելով մկների համառությունը՝ սկյուռները որոշեցին լրել իրենց բները և բարձրանալ ծառերի վրա: Սկզբում մի քիչ անհարմար էր ծառի ճյուղերին ապրելը: Բայց երբ փշակ էին գտնում և այնտեղ իրենց համար բույն սարքում, կյանքը բավականին հեշտանում էր: Ամբողջ ամառ սկյուռները իրենց փշակներում ձմեռված պաշար էին ամբարում՝ ծառերից հավաքելով կաղիններ, անտառային վայրի պտուղներ, որն էլ շարունակում են մինչև այսօր:

Բայց միևնույն է, սկյուռները մինչ այսօր էլ մոռացկոտ և շատակեր են մնացել և բնավ էլ չեն հրաժարվում իրենց սովորութներից: Այ, երբ անտառով երեխաններ են անցնում, նրանք արագորեն ծառերից իջնում են ցած և ուտելիք խնդրում՝ մոռանալով, որ գալիք ձմեռված համար փշակում ամբարած դեռևս լիքը ուտելիք ունեն:

ԹԵ ԻՆՉՈՒ Է ՓԱՅՏՓՈՐԻԿԸ ԱՆՏԱՌՈՒՄ ԹԽԿԹԽԿԱՑՆՈՒՄ

Անտառում բնակվում է մի շատ տարօրինակ թռչուն, որն անընդհատ թխկթխկացնում է՝ կտուցով հարվածելով հաստարուն ծառերի հաստ կեղևներին և կարծես այնտեղ ինչոր բան է փնտրում: Ճիշտ է, մնացած թռչուններն ել նատում են ծառերի ճյուղերին ու ցողուններին, բայց նրանք, սովորականի պես, երգում են, ծլվլում, դայլայլում, իսկ փայտփորիկը կտուցով անընդհատ թխկթխկացնում ու թխկթխկացնում է, և այդ ձայները ամեն օր տարածվում են անտառով մեկ:

Ոմանք ասում են, որ այս թռչունը կտուցով փորում է ծառի կեղևը և այնտեղից միջատներ, թրթուններ գտնելով՝ իր ամենօրյա սնունդն է հայթայթում: Դրա համար էլ նրան անվանում են փայտափոր կամ ավելի բնքուշ՝ փայտփորիկ: Իսկ ես մեկ ուրիշ պատմություն գիտեմ փայտփորիկների մասին: Դե, ուրեմն, ի՞նձ լսեք:

Այս թռչունները շատ աշխատասեր են ու միշտ էլ ցանկացել են իրենց համար բույն սարքել ծառերի փշակներում: Թռչելով հեռու հեռավոր երկրներից, եկել են անտառ, ծառերի վրա փշակներ գտել, իրենց ուժեղ կտուցներով դրանք մաքրել քամու բերած փայտի կտորներից ու չորացած տերևներից: Հետո էլ փայտփորիկներն իրենց ամուր պոչիկներով ավլել են փշակների հատակը և պատրաստվել այնտեղ բնակվելու, բայց, ավաղ, նրանք միշտ էլ չեն հասել իրենց երազանքին...

Բանն այն է, որ հանդուգն սկյուռները, որոնք գետնի վրա միշտ շփոթվում ու անկոչ հյուրի պես ապրում էին մկների գետնափոս բներում՝ բարձրանալով ծառերի վրա, նույն կերպ էին վարվում փայտփորիկների հետ: Բնավ մտքներով էլ չէին անցկացնում, որ նախօրոք մաքրած և կոկիկ տեսքի բերված պատրաստի փշակները նախատեսված չեն իրենց համար և տեր ունեն: Ասես ավելիս: Երբ փայտփորիկները արդարանում ու բացատրում էին, որ փշակներն իրենց բներն են, սկյուռները միշտ նույն պատասխանն էին տալիս.

– Ի՞սչ եք ամեն օր գլուխներս ցավեցնում ձեր բողոքներով, – ասում էին նրանք փայտփորիկներին, – անտառը բոլորիս համար է, և ոչ ոք իրավունք չունի միանձնյա տիրանալու

նրա բարիքներին: Ձեզանից հետո մենք ենք մտել փշակը, ուրեմն մենք էլ այստեղ պիտի ապրենք: Գնացեք և ձեզ համար ուրիշ փշակ փնտրեք:

– Բայց ինչո՞ւ ուրիշ փշակ փնտրենք, երբ որ մերն ունենք, – ընդդիմանում էին փայտփորիկները ու երբեք հաջողության չէին հասնում, որովհետև գործ ունեին սուր ատամներով և իրենցից մի քանի անգամ մեծ սկյուռների հետ, որոնց դեմ ուժով անզոր էին պայքարել:

Ու այսպես, ամեն անգամ, փայտփորիկները գլխիկոր



հեռանում էին իրենց փշակներից, որոնց վրա այդքան չարչարանք էին թափել: Բայց, ինչ արած, անտառում ուժեղը միշտ էլ հաղթում է թույլին: Ասիրածեշտ էր մի ձար անել: Այս հարցով փայտփորիկները որոշեցին գանգատվել թռչունների արքա արծվին:

– Մեր թագավոր: Մեզ մի խորհուրդ տուր, թե ինչպես վարվենք այս հանդուգն սկյուռների հետ: Այս ամեն անգամ աշխատանք ենք անում, մեծ ջանքեր թափում, մաքրում ու կարգի ենք բերում ծառերի փշակները, որ հետո էլ այնտեղ բույն դնենք, ձագուկներ ունենանք, բայց արի ու տես, որ այդ հանդուգն սկյուռները մեզ վրնդում են մեր փշակներից:


– Ես ձեզ խորհուրդ կտամ կռվի չբռնվել սկյուռների հետ , – պատասխանեց խելացի արքան: – Նրանք ձեզնից ուժեղ են, և դուք հաստատ կպարտվեք:

– Իսկ դուք չեք կարող դրանց հախից գալ, – խնդրեցին թռչունները իրենց արքային: – Չե՞ որ դուք էլ ուժեղ, հզոր ձանկեր ունեք ու մեծ կտուց: Բա ինչո՞ւ չեք նրանց պատժում:

– Ճիշտն ասած, սկյուռներն ինձնից վախենում են: Երբեմն ես նրանց հենց ծառերի ճյուղերի վրայից ձանկում ու երկինք եմ բարձրացնում, – պատասխանեց արծիվը:

– Երևի հենց դրա համար էլ սկյուռները նախընտրում են ապրել փշակներում, որպեսզի պաշտպանվեն մեր արքա արծվի օդային հարձակումներից, – միաբերան բացականչեցին փայտփորիկները:

– Ես ձեզ ընդամենը մի խորհուրդ կտամ: Ավելի լավ է, մյուս թռչունների նման, դուք էլ ձեր բույնը չոր խոտերով հյուսեք ծառի ճյուղերին և այդտեղ բնակվեք: Վստահ եղեք, որ ձեր իսկ հյուսած բները շատ հարազատ կլինեն ձեզ համար, և դուք այնտեղ ավելի երջանիկ կապրեք, քան փշակներում:



Այդ օրվանից փայտփորիկները հետևեցին իրենց արքայի խորհրդին և սկսեցին ծառերի ձյուղերին բույն հյուսել: Ճիշտ է, անտառում բնակվող մյուս բոլոր թռչունների պես նրանք ել իրենց վաստ չեն զգում այդ բներում, բայց, միևնույն է, դեռ շարունակում էին երազել հարմարավետ փշակներում բնակվելու մասին: Չե՞ որ փշակներն ավելի ընդարձակ էին, ապահով ու պաշտպանված անտառային քամուց և անձրևներից:

Այդ է պատճառը, որ փայտփորիկները մինչ օրս էլ, չնայած ապրում են իրենց իսկ հյուսած բներում, ամուր կտուցներով դեռ փորձում են ծառերի վրա փշակներ փորել և անընդհատ թխկթխկացնում ու թխկթխկացնում են...

ԹԵ ԻՆՉՈՒ Է ԱՐՁԸ ԶՍՈՑԸ

ՔՈՒՆ ՄՏՆՈՒՄ

Ո՞վ չգիտի, որ արջերը ամբողջ ձմեռ անտառում քուն են մտնում՝ դուրս չգալով իրենց որջերից: Ոմանք պատմում են, որ անտառային արջերը ծովյլ են, չեն սիրում որս անել և այդ պատճառով էլ իրենց մորթու տակ ամոան ամիսներին հաստ ձարպի շերտ են հավաքում: Իսկ հետո էլ գերադասում են դրանով ողջ ձմռանը սնվել ու քնել: Մյուսներն էլ համոզված են, որ, ի տարբերություն թևեռային սպիտակ արջերի, որոնք ապրում են ձյան և սառույցների մեջ, անտառային գորշ արջերը շատ մրսկան են, այդ պատճառով էլ ձմռանը դուրս չեն գալիս իրենց տաքուկ որջերից:

Իսկ ես էլ մի ուրիշ պատմություն գիտեմ և հիմա ձեզ կներկայացնեմ, թե ինչու են արջերը ձմռանը երկարատև քուն մտնում:

Անտառում ամենաշատակեր և խոշոր գագանը արջն է: Նա ամենակեր է և ուտում է ինչ որ պատահի՝ վայրի մրգեր, անտառային հատապտուղներ և նույնիսկ սատկած կենդանիների մնացորդներ: Բայց առավել շատ արջը վայրի մեղրն է սիրում և նույնիսկ գերադասում է բազում խայթոցներ ստանալ անտառային մեղուներից, բայց իր ծուռ թաթով հասել մեղվանոցին և ուտել այնտեղի մեղրը:

Իսկ մեղուներն էլ ամեն գնով ուզում են պաշտպանվել արջերից: Այս այդ խոշոր կենդանիները հաճախ են հանդգնում իրենց ծուռ թաթերը մտցնել մեղվանոցի փեթակների մեջ և

այնտեղից մեղը վերցնել: “Են, իհարկե, դա շատ է զայրացնում մեղուներին: Նրանք շատ քաղաքավարի են և կարող են արջին հյուրասիրել իրենց պատրաստած մեղից, բայց այդ գազանը շատ անկուշտ է և ուզում է ուտել խեղճ մեղուների ամբողջ մեղը:

Դեռ, ով չգիտե, որ փեթակներում մեղը անտառային մեղուները հավաքում են որպես ձմեռվա կերակուրի պաշար: Վկար ամբողջ ձմեռ անտառը ծածկվում է ձյան շերտով, և ուրեմն որտեղից պետք է մեղուները նեկտար հավաքեն և կշտանան: Միակ կերակուրը ձմեռվա համար ամբարված մեղըն է, որին էլ ամեն անգամ ամբողջությամբ ուզում է տիրանալ անկուշտ արջը:

Ու մի օր էլ մեղուները հավաքվեցին և ժողով հրավիրեցին, թե ինչ ձար գտնեն արջերից պաշտպանվելու համար:



Նրանցից մեկն ասաց.

– Մենք շատ փոքր ենք, որ արջի դեմ կոխվ տանք, բայց եթե միանանք ու պարս կազմենք, արդեն խմբով կհարձակվենք հանդուգն արջի վրա և կհաղթենք:

– Դա գործին չի օգնի,– խոսեց մեկ այլ մեղու,– արջը այնքան հաստ մորթի ունի, որ անգամ չի վախենում մեր հարյուրավոր խայթոցներից: Մենք պետք է պարզապես խորամանկենք և դրանով իսկ պաշտպանենք ձմեռվա համար պաշարվող մեղ-ը,– խոսեց մի խելացի մեղու:

– Բայց ինչպես,– բացականչեցին մյուս մեղուները:

– Ես մի ուղի գիտեմ, որով հնարավոր կլինի խորամանկել և խարել արջին,– շարունակեց խելացի մեղուն:

– Դե, մեզ էլ ասա այդ մասին,– հետաքրքրվեցին մյուսները:

– Մի քանի մեղուներով պատվիրակություն կկազմենք և հյուր կգնանք արջին՝ մեզ հետ մի քիչ մեղը տանելով: Նրան կհամոզենք, որ ձմեռները մեզ պես դուրս չգա անտառ, պարզապես քուն մտնի իր որջում: Այդպես շատ ավելի հանգիստ կանցկացնի ձմեռային ցուրտ օրերը:

– Բայց արդյո՞ք նա կհամաձայնի,– միաբերան հարցրին մյուս մեղուները:

– Իհարկե, կհամաձայնի,– պատասխանեց խելացի մեղուն,– եթե նրան ասենք, որ իրեն ենք նվիրում մեր ձմեռվա մեղրի ողջ պաշարը: Իհարկե, ին այդպես չենք վարվի: Ընդամենը կխորամանկենք, և արջին կիյուրասիրենք հավաքած մեղրի պաշարներից ընդամենը մի փոքր մաս՝ հավաստիացնելով, որ ամբողջն է: Նա կհավատա մեզ, նվերը կընդունի ու աշնան վեր-ջին կմտնի իր որջը, որպեսզի ամբողջ ձմեռ այնտեղ անցկացնի մեղր ուտելով: Եվ միայն դրանից հետո մենք հանգիստ շունչ կքաշենք: Չե՞ որ մինչև գարուն այդ անկուշտ ծուռթաթը այլս դուրս չի գա իր որջից ու մեր մեղրին աչք չի գցի:

Մեղուները հենց այդպես էլ վարվեցին: Աշնան վերջին





հյուր գնացին արջի մոտ, նրան մեղր նվիրեցին՝ ասելով, որ պատրաստվում են ձմեռել իրենց փեթակներում առանց մեղրի: Ծուռթաթն էլ շնորհակալություն հայտնեց և ասաց.

– Շատ շնորհակալ եմ մեղրի համար: Ես էլ ձեզ նման ձմռանը անտառ դուրս չեմ գա: Ի՞նչ պիտի անեմ դուրսը՝ այդ ցուրտ օրերին: Կնստեմ իմ որջում և կուտեմ ձեր նվիրած մեղրը, մինչև գարուն կգա:

Մեղուները հանգիստ շունչ քաշեցին և հրաժեշտ տվեցին արջին: Նրանք հասկացան, որ վերջապես այդ անկուչտը ձմռանն իրենց չի նեղացնի, քանի որ նրան համոզեցին, որ իրեն են հանձնել պաշարված ամբողջ մեղրը: Դե, իհարկե, արջն էլ դրան հավատաց և մեղրն առնելով՝ մտավ իր որջը: Բայց կարծ ժամանակ անց ամբողջությամբ կերավ նվեր ստացած մեղրը ու, երբ թաթը մտցրեց կճուճի մեջ, տեսավ որ այն արդեն դատարկ է:

Աստարում առատ ձյուն եկավ, և արջը որոշեց քնել ու մինչև գարուն դուրս չգալ իր տաքուկ որջից: Բայց քանի որ թաթը մեղրոտ էր, այն դրեց բերանը և սկսեց ծծակի տեղ օգտագործել՝ ինչպես նորածին երեխաները:

Ահա թե ինչու մինչև այսօր, երկարատև քուն մտնելիս, ծովյլ արջը իր որջում թաթը բերանն է դնում և ամբողջ ձմեռ ծծակ է սարքում՝ քնի մեջ երազելով առատ աշնանային մեղր: Իսկ այդ ընթացքում աշխատասեր մեղուները վայելում են իրենց քրտնաջան աշխատանքի արդյունքը՝ ձմեռվա ցուրտ օրերին փեթակներում թեյ խմելով և մինչև գարուն ուտելով աշնանային քաղցր մեղրը: